1893 ՄԱՐՏԻ 7 (19), ԿԻՐԱԿԻ

№ 28—ՏԱՍՆԵՐԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 28

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏԻ 7 (19) 1893

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔԸ“ ՆԵՐԿԱՅ 1893 ԹՈՒԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆՈՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ներկայ 1893 թուին «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կը հրատարակուի այժմեան գիրքով և նոյն ծրագրով։ Թերթը կը ստանայ «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներ։

‹Արձագանքը› լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»՝ տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երևանեան հրապարակի և Միջի-Փողոցի անկիւն, քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՌԳՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ԱԶԳ

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» համարները՝ բացի Թիֆլիզից հատով վաճառվում են նաև հետևեալ տեղերում.

Բագու. պ. Սարգիս Զիրազեանցի գրավաճառանոցում։

Ալեքսանդրապոլ. «Զիրակ» գրավաճառանոցում։

Գանձակ. պ. Աղայ Աղայեանցի գրավաճառանոցում։

Նոյն տեղերում ընդունվում է նաև բաժանորդագրութիւն, այլ և յայտարարութիւններ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» մէջ տպելու համար։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրիկի նամակը։

Զոգենաւ Սևանայ լճի վրայ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձութեան որոշումը։ Մի մասնաժողով ոգելից ըմպելիքների վերաբերեալ։ Հեռախօսի շինութիւնը Թիֆլիզում։ Դիւղական ուսումնարանների շինութիւնները։ «Ծովինար» գրքոյկը։ Նամակ խմբագրութեան։ Նամակ խմբագրին։ Բազուից։ Տղվիաւ գիւղի անմխիթար դրութիւնը։ 102-ամեայ մի ծերունի։

ԹԵՐԹՕՆ.—Օրատետր։

ՖԵԼԻԵՏՕՆ.—Մարդասպանը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Դերենցի արտասանած ճառը Պէշիկթաշլեանի գերեզմանի վրայ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

ԶԱՆԱԶԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Նորին Վեհափառութիւն Ամենապատիւ Խրիմեան Հայրիկից բաղդ ունեցանք մարտի 6-ին մի նամակ ստանալու գրուած Երուսաղէմում, փետրվարի 16-ին։ Երջանիկ ենք համարում մեզ, որ կարող ենք հրատարակել, թէ Նորին Վեհափառութիւնը Անձամբ է հաստատում Սրբազան Սահակ եպիսկոպոսի մեր լրագրում տպագրուած հեռագրի բովանդակութիւնը իւր առողջութեան մասին։ Նորին Վեհափառութիւնը բոլորովին առողջ է և վերջին ամիսները ոչ մի օր հիւանդ չէ եղած։

ԶՈՂԵՆԱՒ ՍԵՒԱՆԱՅ ԼՃԻ ՎՐԱՅ

Մեր Հասարակութեան նախաձեռնութեան ոգի չունենալու ամենամեծ ապացոյցն է Սևանայ լճի ներկայ վիճակը։ Պատմութիւնը և ամենօրեայ փորձը ցոյց են տալիս, որ Հայերը առևտրական և արդիւնաբերական ասպարիզում սովորաբար նախաձեռնող և հնարագէտ չեն, այլ միայն հետևողներ։ Բաւական է, որ մէկը ձեռնարկէ որ և է արդիւնաւոր գործի, և ահա հարիւրաւոր անձինք կը հետևեն նրան։ Յաճախ մի և նոյն ասպարիզում մրցողները, իրանց ազգային առանձնայատկութիւնների շնորհիւ, աւելի պատրաստ են ամեն առիթներին վերջին կատաղութեամբ և ամեն ինչ զոհելով վնասել իրանց ախոյեանին, քան թէ բաւականանալով փոքրիկ շահով, և գործի յաջողութեան նպաստել ընդհանուր ուժերով։ Այս յատկութիւնն ունին այն ազգերը, որոնք զուրկ են ընկերասիրական զգացմունքից։ Այս զգացմունքի բացակայութիւնն ստատնում է ազգայում աւելի մեծ վնասներ հասցնելու, քան թէ հասցրել է անցեալում, որովհետև ներկայ արդիւնաբերական գործունէութեան յառաջադիմութիւնն այնպիսի գումարներ է պահանջում, որ չեն կարող մէկի ձեռքում կենդրոնացած լինել, այլ կարող են գտնվել միայն ընկերութիւնների համագումար ուժերով։ Առևտրական աշխարհում երկու տարի առաջ շատ խօսք ու զրոյցի առիթ տուեց երկու հայ ընկերութիւնների մէջ եղած մրցումն խաւիարի իւրաքանչիւր ֆունտի գնի վրայ 50 կոպէկ աւելացնելու խնդիրը, որ վերջացաւ կապալի գնի վրայ կէս միլիոն ռուբլի աւելանալով։

Ամենքը զանգատվում են առևտրի անկման վրայ, բայց ահա մի ձեռնարկութիւն, որ կարող է հարստացնել այն մարդուն, որ նախաձեռնող կը հանդիսանայ—այդ ձեռնարկութիւնն է Սևանայ լճի վրայ շոգենաւ բանեցնելը։

Հասկանալի է, որ կառավարութիւնն այդ գործը ձեռնարկողին կ'ապահովէ ժամանակաւոր արտօնութիւններ տալով, նրան անմիտ ախոյեաններից պաշտպանելու նպատակով։ Սևանայ լիճը երկու և կէս անգամ մեծ է Ժընեվի լճից, և նրա շրջագիծը 220 վերստ է։ Նորա ափերի բնակիչները բացի Գիւնէի ափերից, բաւական խիտ են։ Բնակիչները մեծաւ մասամբ Հայ են։ Գոցա մէջ կայ առևտրական հաղորդակցութիւն, որ կատարվում է նաւակներով, այնպիսի եղանակով, որ գործ են դնում միջին Աֆրիկէի վայրենիները։

Ահա մեր հաւաքած տեղեկութիւնները Սևանայ լճի վրայ կատարուող հաղորդակցութեան եղանակի, միջոցների և քանակի մասին.

Սևանայ լճի վրայ բանող 30 նաւակների նաւահանգիստն է Նորադուզ գիւղը, իսկ 7 հատինը Ղշլաղ գիւղը. նաւակներն ման են գալիս Նորադուզից և Ղշլաղից մինչև Զբուխլու և Ելենովկա. բերած ապրանքներն են՝ ցորեն, գարի, սորուկ, կտավհատ. Զբուխլուից տարած ապրանքն է՝ փայտ, ածուխ, տախտակ և գերան։ Բացի սրանից կայ և ուղևորների փոխադրութիւն։ Թոխլուջից, Ջիլլից, Զորջից Նոր-Բայազէտ են տանում՝ փայտ, ածուխ, գերան և ուրիշ ինչ որ պատահում է՝ այս նաւակները տարուայ ամեն ժամանակում ման են գալիս։ Ջաղից և Բասարկեչարից մինչև Զբուխլու կամ Ելենովկա բերած ապրանքն է՝ ցորեն, գարի և այլն։ Նոր-Բայազէտից և իւր բոլոր նահանգից դուրս կը գայ 4000 խալվար ցորեն, գարի և այլն, Նոր-Բայազէտից կամ Նորադուզից, Ղշլաղից մինչև Ելենովկա կամ Զբուխլու մի խալվարին վարձ են վճարում 10 կոպէկ կամ փթին երեք կոպէկ։ Ջաղից և Բասարկեչարից մինչև Զբուխլու կամ Ելենովկա մի խալվարի վարձն է 1 ռուբլի 20 կոպէկ կամ 1 ռ. 40 կ.։ Սևանայ ուխտաւորի ժամանակն է Վարդավառին, Սուրբ Աստուածածնին և Սուրբ Խաչին, իսկ աշնան ժամանակն ամեն կիրակի։ Զբուխլուից մինչև Նոր-Բայազէտ մի մեշոկ անծուխի վարձն է 10 կոպէկ, մի սաժէն ցախի վարձն է 3 ռուբլի 50 կոպէկ, գերանի վարձն է 50 կոպ.։ Մաղրից մինչև Նոր-Բայազէտ մի սաժէն ցախի փոխադրութեան վարձն է 4 ռուբլի, մի հատ գերանին 60 կոպ.։ Թոխլուջից մինչև Նորադուզ կամ Նոր-Բայազէտ գերանի փոխադրութեան վարձն է 40 կոպէկ։

Առաջ բերած թուերը ցոյց են տալիս, որ ներկայումս էլ Սևանայ լճի վրայ առևտրական հաղորդակցութիւնը բաւական կենդանի է. յայտնի բան է, ոչ ոք չէ կարող գուշակել, թէ որքան այդ կ'աճի կամ կը զօրանայ, երբ ներկայ առաջատաւոր նաւակներին կը փոխարինէ շոգենաւը, որ այսքանս կարելի է միայն գրականապէս ասել, որ շոգենաւի տէրը ոչ միայն վնաս չի ունենայ, այլև բաւական մեծ շահ կ'ունենայ։

Աւելորդ ենք համարում լիշել անգամ և այն, որ Սևանայ լճի վրայ կանոնաւոր շոգենաւային հաղորդակցութիւն լինելուց յետոյ նորա ափերը կը լցուեն ամարանոցով, որի համար այդ ափերի կլիման մեծ յարմարութիւններ ունի։

Պէտք է նկատել, որ շոգենաւային ընկերութիւնը կարող է իւր ձեռքի տակ առնել և Սևանայ լճի ձկնորսութիւնը և կարդի կանոնի տակ դնել այդ ու աւելի արդիւնաւորել։ Պրոֆեսոր Բէրը վաղուց արդէն ցոյց է տուել Սևանայ լճի ձկների գինը բարձրացնելու հնարաւորութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձութիւնը իւր վերջին նիստում ներկայ 1893 թ. նախահաշիւը քննելով հարկաւոր է համարել աւելացնել ուսուցիչների ռոճիկները։ Ուսուցիչները առաջիկայ սեպտեմբերից պիտի ստանան իւրաքանչիւր դասի համար 70—60 ռուբլի փոխանակ 60—50-ի։

Բացի ուսուցիչներից ռոճկից աւելացրած է նաև գանձապահի ռոճիկը. նա ստանալու է այս մարտ ամսից սկսած տարեկան 500 ռուբլի փոխանակ 300-ի։

* * *

Ելևմտից նախարարութեան մէջ մի մասնաժողով է կազմուած ոգելից ըմպելիքները տէրութեան ձեռքով ծախելու գործը կազմակերպելու համար։ Սկզբում այդ գործը կը կատարուի Սամարայի, Ուֆիմի, Օրգինբուրգի և Պերմի նահանգներում։

* * *

Մարտի 4-ից փոստային-հեռագրական շրջանի այն ծառայողները, որոնց յանձնուած է տելեֆօնի (հեռախօսի) շինութիւնը Թիֆլիզում, արդէն ձեռնամուխ են եղել սկզբնական գործողութիւնների։ Տելեֆօնի ցանցի կենդրոնը լինելու է գլխաւոր փոստատունը։ Միւս շաբաթ կը սկսեն արդէն փողոցներում սիւներ դնել։ Յունիսի սկզբին բոլոր գործն արդէն վերջացած կը լինի։

* * *

Թիֆլիզի նահանգապետի կարգադրութեամբ բոլոր գիւղական ուսումնարանների շինութիւնները պէտք է մաքրուին և յարմարեցնուին առողջապահական պայմաններին։

* * *

Պ. Սար. Քամալեանցի «Ծովինար» սիրուն հէքեաթը, որին իւր ժամանակին «Արձագանքը» մի ընդարձակ մատենախօսութիւն է նուիրել, լոյս է տեսել երկրորդ տպագրութեամբ։ Շատ ուրախալի է որ ժողովրդական կեանքից ու աւանդութիւններից վերցրած և կենդանի ու կոկիկ լեզուով գրուած այդպիսի գրքեր բաշխվում։

դեռ աշխարհ չտեսած, այն սիրուն աշխարհը, որ լի է խարդաւանքներով և ստոր նախանձով։ Գուրգէնը քրտան և չորս տարեկան էր, իսկ իւր սրտի սիրելին՝ Հռիփսիմէն տասն և վեց գարուն տեսած։ Քնքուշ աղուամազը նոր ծածկել էր Գուրգէնի առոյգ դէմքը և սև սաթի նման բեխերը նոր ծլել, որ Հռիփսիմէի սրտում կրակ էին ձգել։ Ո՜հ, Հռիփսիմէի երկու հատ սիրուն, վառ աստղերի նման աչքերը սիրով և անհուն երջանկութեամբ էին լցուած։ Բայց երջանիկ ժամերը սահում էին շատ շուտ և նրանց բաժանման րոպէն մեծ լեռան նման կանգ առնում նրանց առաջ։

—Էլ ե՞րբ կը գաս, հարցնում էր Հռիփսիմէն աչքերը չհեռացնելով Գուրգէնից։

—Ջատ շուտ, իմ սիրական, ես կարճ ժամանակով գնում եմ գիւղ, որտեղից վերադառնալուց յետոյ կ'անենք մեր հարսանիքը և այնուհետև ոչ մի րոպէ չեմ բաժանուի քեզանից, պատասխանեց Գուրգէնը։

Բայց հէնց այն միջոցին, երբ այդ երկու սրտերը իրար գրկած իրանց սէրն էին արտայայտում, պարտիզի ծայրին, ծառերի միջից մի ստուեր երևեցաւ, որ զգուշութեամբ առաջ էր գալիս դէպի նշանածները։ Նա մօտեցաւ և կանգ առաւ մի ծառի ետևը և նայեց դրանց։ Մի տեսակ կատաղութիւն անցաւ նրա դէմքի վրայ, և նա ատամները կրճատցնելով մի մունչիւն արձակեց։

—Հ՞ըմ, ասաց նա, և ձեռքը դէպի իւր գօտին կապած սուրը տանելով ուզեց մի ոստիւնով վրայ վազել բայց զսպեց իրան և անշարժ արձանի նման կանգ առաւ տեղն ու տեղը։

Այդ միջոցին Հռիփսիմէն ղլուխը բարձրացրեց և նայեց այն կողմը։ Նրա մարմնով մի սարսուռ անցաւ, երբ տեսաւ իւր վրայ յառած երկու վայրենի աչքեր ու աւելի ամուր սեղմուեց Գուրգէնին։

—Ի՞նչ կայ, հոգիս, ի՞նչու դու դողում ես։

—Ո՞հ, ես վախենում եմ, սիրելիս։

—Ինչի՞ց, մի՞թէ ինձանից, որ այսպէս անհուն սիրով սիրում եմ քեզ։

—Ո՞հ, ոչ, ի սէր Աստուծոյ, կամաց խօսիր, տեսնում ես այն ծառը, նրա ետևը մի մարդ կայ թաղնուած և մեզ է նայում։

—Ի՞նչ մարդ է և ո՞վ է, ասաց Գուրգէնը և ուզեց իւր քայլերը դէպի այն կողմը, բայց այդ մարդը այլ ևս չկար. նա անյայտացել էր։

—Ո՞վ էր, կրկնեց Գուրգէնը։

—Որքան նկատեցի մեր հարևան Սարգիսն էր։

—Ի՞նչ գործ ունի նա այստեղ, ձեր պարտիզի մօտ։

—Զգիտեմ, ահա քանի ժամանակ է նա հետևում է ինձ և իւր վայրենի աչքերով հալումաշ անում ինձ... ա՜խ, ես դրանից վատ բան եմ գուշակում, դա յայտնի սրիկայ է և ամեն բան ձեռքիցը դուրս կը գայ։

Գուրգէնը մի վայրկեան կանգ առաւ և ձեռքը դէպի ճակատը տանելով շփեց նրան, կարծես թէ մի ինչ որ ծանր միտք կանգ էր առել նրա գլխում և նա ուզեցաւ հեռացնել նրան։

—Մի՞թէ դա չգիտէ, որ դու իմ նշանածն ես և թէ մենք չունինք հարբստութիւն, որ կարողանայ կողոպտել։

—Չէ, Գուրգէն ջան, չէ, դրա քայլուածքից ես ուրիշ բան եմ գուշակում, դա մեզանից ոսկիներ չէ ուզում, այլ մեր դժբաղդութիւնը. դա վաղուց հետևում է ինձ և այն օրից երբ մենք նշանուեցանք, համարեա գիշեր ցերեկ պտըտվում է մեր տան շուրջը։

Գուրգէնը ոչինչ չպատասխանեց, այլ մի տեսակ տխրութեան ամպ շառագունեց նրա երեսը։ Նա իրան ամենից բաղդաւորն ու երջանիկն էր կարծում, բայց այդ վայրկենին զգաց, որ այնպէս հեշտ չէր երջանկութիւն ձեռք բերելը։

Երբ Հռիփսիմէն տեսաւ նրա դէմքի մռայլութիւնը, նրա սիրտը կսկծաց ու փոշմանելով իւր յայտնութեան համար սկսեց նորից սիրտ տալ նրան։

—Մի՞ տխրիր, սիրելիս, ինչ կարող չէ անել այդ սրիկան մեզ, քանի որ մենք շուտով կըպսակուենք և ամեն բանին վերջ կը դրուի։

—Է՞հ, ի՞նչու պէտք է տխրեմ և դա ոմ է որ ես դրանից վախենամ, բայց հիմա տուն գնալու ժամանակ է, ես պէտք է վաղուան ճանապարհորդութեան պատրաստութիւնս տեսնեմ, ասաց Գուրգէնը և երկուսն էլ տուն մտան։

II

Գուրգէնը Ջ. գիւղից էր և Թիֆլիզում պարապում էր առևտրով։ Մի տարի էր, ինչ գտնվում էր Թիֆլիզում և իւր առևտուրը օր աւուր առաջ էր գնում, այնպէս որ նա ունէր իւր սեպհական խանութը և մտածում էր բոլորովին տեղափոխուել Թիֆլիզ, գիւղից իւր ծնողներին բերելով։ Նրա համեստ վարք ու բարքը և առևտուրի յաջողութիւնը գաղտնիք չմնաց Թիֆլիզցիների այն ծնողներից, որոնք աչքերը չորս ա-

---

բած երիտասարդներ են որոնում իրանց աղջկերանց «կպցնելու» համար, ինչպէս ասում են Թիֆլիզցիք։ Եւ Գուրգէնն էլ ազատ չմնաց այդ տեսակ ծնողներից, որոնցից ամեն մէկն աշխատում էր իւր ցանցը ձգել պատուելով նրան ճաշերով և ընթրիքներով։ Բայց Գուրգէնն այն երիտասարդներից չէր, որ շուտով խաբուէր, նա փողին ու բաժինքին չնայեց, այլ իւր սրտին և մի քանի անգամ գնալ գալով բազազ Պետրոսի տուն, մօտիկ Ծանօթացաւ նրա աղջկայ՝ Հռիփսիմէի սրտին ու խելքին, սիրեց նրան և նրա ձեռքն ուզեց։ Բազազ Պետրոսն էլ դրան էր սպասում, դրանից լաւ փեսացու չէր ուզում և կարճ ժամանակից յետոյ նրանց նշանդրէքը սարքեց մեծ հանդէսով։

Այնուհետև երկու երիտասարդ սըրտերը օր աւուր մօտեցան և ջերմ սիրով սիրեցին իրար և Գուրգէնն ամեն կերպ շտապում էր հարսանիք անելու և յաւիտեան կապուելու իւր սիրուն Հռիփսիմէի հետ։ Կարծես նա վախենում էր որ Հռիփսիմէին իւր ձեռքից կը խլեն և նա վաղ առաւօտից պիտի ճանապարհ ընկնէր Ջ... գիւղը իւր ծնողներին հարսանիք բերելու։ Բայց Գուրգէնն իրաւունք ունէր վախենալու որ Հռիփսիմէին իրանից կը խլեն։ Ո՞ւմ չի գրաւի սիրուն վարդը, նոր բա-

մաթիւ ընթերցողներ են գտնում։ Ցանկալի է որ մէջից տրուէր երիտասարդ բանահաւաքին օր առաջ լոյս ընծայելու իւր ժողոված նիւթերը, որոնցից անշուշտ մեծապէս կարող էր շահուել հայ ազգագրութիւնը։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ընթերցողն անկասկած կը յիշէ թէ Րաֆֆիի մահից յետոյ, քանի անգամ լրագրութեան մէջ հանդիպած է եղել մեր յայտարարութիւններին, որոնց մեծ մասը վերաբերում են նորա գրքերի ապառիկներին։

Ահա լրանում է հինգերորդ տարին և այդ հինգ տարուան ընթացքում բազմաթիւ պարոններից դեռ ոչ մի պատասխան չենք ստացել մինչև օրս։

Ի նկատի ունենալով թէ լրագրութիւնների յայտարարութիւններն ազդեցութիւն չունեցան նոյն պարոնների վրայ, մենք նաև առանձին մասնաւոր նամակներով դիմեցինք նրանց, և ներկայացնելով նոցա հաշիւը, որ արտագրուած էր Րաֆֆիի հաշուեմատեանից, բայց նրանք դարձեալ անտարբեր մնացին մինչև օրս։

Նրանց այդ անտարբերութիւնը քաջալերեց մեզ մի ցուցակ կազմել և նորա մէջ զետեղել նրանց անունն ու ազգանունները իրանց հաշիւներով. այդ ապառիկի հաշիւը հասնում է մինչև 15 — 20 հազար ռուբլու...

Մենք չէինք կամենում նորից ձանձրացնել ընթերցողին այդ քանի մի անգամ կրկնուած խնդիրով, միևնոյն ժամանակ խանգարել «[illegible]» հանգստութիւնը, եթէ մեր դրութիւնն ապահովուած լինէր։ Բայց մենք կարիք ունինք նոյնպիսի գումարի, որով կարելի կլինէր հրատարակել Րաֆֆիի բոլոր աշխատութիւնները առանց դժուարութիւնների։

Եւ քանի որ մենք մի այլ եկամտի աղբիւր չունինք բացի այդ աղբիւրից, որի արդիւնքով կառավարում ենք նորա դժբաղդացած ընտանիքը, և երկու որբոց ուսումը, և նոցա անհրաժեշտ այլ ծախսերը, և հրատարակում ենք նրա աշխատութիւններից իւրաքանչիւր տարի մի երկու օրինակ. ուրեմն նոյն քանակութեամբ ապառիկի կորուստը, փոքր հարուած չէ, որ մեծ արգելառիթ է եղել մեծ գործերի կանոնաւոր շարունակելուց։

Զննելով զանազան հանգամանքներին, մենք նորից աշխատում ենք լցնել մեր հայ ժողովրդի պահանջը հրատարակելով Րաֆֆիի թէ սպառուած և թէ անտիպ ձեռագիր աշխատութիւններից։

Մինչև ամսոյս վերջը լոյս տեսնելու վրայ են, Կայծերի I հատորը և Վէպիկների II հատորը. ուստի խնդրում եմ այն յարգելի պարոններին, որոնց ուղարկուած է բաժանորդագրութեան թերթերը, շտապեն շուտափոյթ վերադարձնել մեզ վաճառուածների արժէքը և անվաճառ մնացած թերթերը, որպէսզի կարողանանք ժամանակին ուղարկել բաժանորդներին իրանց հասանելիքը։

Աւելորդ չեմ համարում յայտնել ի գիտութիւն հայ ընթերցող հասարակութեան, որ Կայծերի I հատորը տպագրվում է սահմանափակ օրինակներով, ուստի նախօրօք յայտնում ենք, որպէսզի ցանկացողներն օր առաջ դիմեն մեզ՝ ուղարկելով գրքի կանխիկ վճարը, որ մենք կարող լինինք կատարել նոցա պահանջը։

Խնդրում ենք այն պարոններին, որոնց մօտ վաճառվում են Րաֆֆիի այլ աշխատութիւնները, բարեհաճեն շուտափոյթ ուղարկել մեզ վաճառուած օրինակների արժէքը և անվաճառ մնացած գրքերի քանակութեան ցանկը, և եթէ կը ցանկանային ունենալ իրանց գրախանութներում մեր հրատարակութեամբ՝ Րաֆֆիի նոր լոյս տեսնող գրքերից, ապառիկ այլ ևս չի ուղարկուի, խնդրեմ չձանձրացնեն մեզ դիմելով դատարկ նամակներով, մենք ժամանակ չունինք իւրաքանչիւրին պատասխանելու, ցանկացողը թող կանխիկ ուղարկի գրքերի արժէքը և կըստանայ իւր ուղարկած գումարի համեմատ գրքեր։ Կանխիկ վճարով գրավաճառին զիջում կը լինի հետևեալ պայմաններով.

Հարիւր ռուբլու արժողութեան գրքերի զեղջը լինելու է 20%, յիսունին 10%։ Քսան ռուբլուց ցած զիջում չի լինի, բացի ուսանողներից։ Իսկ վերադիր վճարով (наложенный платежъ) մէկ կամ երկու գրքի պահանջողը կը մնայ առանց պատասխանի։

Յայտարարելով մեր պայմանները, մեր նպատակն է ծանօթացնել զանազան գաւառաբնակ կամ զանազան քաղաքներից մեզ դիմողներին, որոնց շատ անգամ հարկաւորվում է երեք-չորս անգամ մասնաւոր նամակներով դիմել և հարցնել թէ պայմանների և թէ զիջումի մասին։

Այրի Աննա Մելիք-Յակոբեանց ՐԱՖՖԻ։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Տեղիս թատերասէրների խումբը, որ ահա հինգերորդ տարին է ինչ տարեկան 2—4 ներկայացումներով նպաստում է տեղիս ազգային հիմնարկութիւններին, այս տարի էլ տուել է երկու ներկայացում, որոնցից առաջինը «Պէպօ» և «200,000» յօգուտ Բարեգործական Ընկերութեան խօլերայից վնասուածներին բաժանելու համար և երկրորդը «Էլի մէկ զոհ» և «Կրութ-Կրութ» յօգուտ Թեմական դպրանոցի։

Որպէս այդ խմբի գանձապահ ու հաշուապահ պարտ եմ համարում հրապարակով ներկայացնել ներկայացումների հաշիւը։

Փետրուարի ամսում ներկայացուած «Պէպօ» ներկայացմանը. տոմսակներ պատրաստուած են եղել 326 ռ., որից անվաճառ մնացել են 92 ռ. վաճառուել է 234 ռուբլու։ Ծախք է եղել. 1, բեմին վարձ 30 ռ., 2, երաժիշտներին 20ռ., բեմի 3 ծառաներին 7ռ., 4, լուսաւորութեան և վառելեքի 10ռ 40կ., 5, աֆիշայի տպագրութեան 5ռ., 6, պարիկմախերին 5ռ. և 7, մանր ծախքեր 25. 60կ. գումարը 103 ռ. մնաց զուտ վաստակ 136 ռուբլի, որ յանձնած եմ Ընկերութեան գանձապահին և որ բաժանուած է խօլերայով վնասուածներին, խմբի երկու անդամների ձեռքով։

Ամսոյս 3-ին ներկայացուած «Էլի մէկ զոհ» ներկայացմանը տոմսակներ պատրաստուած են եղել 326ռ., անվաճառ մնացել են 91ռ., վաճառուած է 235 ռ., նուէր պ. ոստիկանապետից և աֆիշաների վաճառումից 2ռ 45կ., գումարը 237 ռ. 40կ։ Ծախք եղել է. 1, երաժիշտներին 15ռ., 2, աֆիշաների տպագրութեան 5ռ., 3, դերեր արտագրելու 4ռ., 4, պարիկմախերին 5ռ., 5, լուսաւորութեան և վառելիքի 10ռ., 6, բեմի վարձ 30ռ., 7, ծառաներին 5ռ. և 8, մանր ծախքեր 28ռ 40կ., ընդամենը ծախսուած է 102ռ. 40կ. զուտ արդիւնք մնաց 135ռ., որ յանձնած եմ Թեմական դպրանոցի պ. գանձապահին։

Ծախքերի մերաբերեալ բոլոր ստացականները և մնացած տոմսակները յանձնուած են իշխանութիւնից նշանակուած հսկիչ պաշտօնեային։

Այդ խումբը պատրաստվում է այս մեծ պասին ներկայացնել յօգուտ Գայեանեան օրիորդաց դպրոցի գրադարանին «Լէյլի» և «Երկու սիրահար», իսկ Զատկից յետոյ յօգուտ Բարեգործական Ընկերութեան «Պատիւ»։

Սիրական Տէր-Մարտիրոսեան։

1 մարտի 1893թ.
Երևան։

***

ԲԱԳՈՒԻՑ հեռագրում են «Նովոյէ Օբոզր.» լրագրին.

«Նոբելի բենզինով բեռնաւորուած «Աֆինա» նաւը այրվում է, այրուել է նաւապետը, նաւաստիները վէրքեր են ստացել»։

***

ՏՂՎԻՍԻ գիւղի ժողովուրդը կատարելապէս զուրկ է հոգևոր մխիթարութիւնից։ Նախկին քահանայի հեռանալուց յետոյ գիւղացիները մնացել են եկեղեցու կարօտ։ Ծնուածները երկար ժամանակով մնում են առանց մկրտութեան, իսկ մեռնողները մեռնում են առանց հաղորդուելու։ 'Ի դիմաց գիւղի պ. Յովսէփ Խախանեանը դիմել է Թիֆլիզի Կոնսիստորիային և խնդրել է մի քահանայ նշանակել գիւղի համար, որ կառավարէ եկեղեցասէր ժողովրդին մինչև գիւղն ունենայ իւր սեպհական քահանան։

***

Մարտի 3-ին յանկարծակի վախճանուեց Թիֆլիզի հալաբար թաղում մի ոմն Աստուր Անանիկեանց 102 տարեկան հասակում։ Հանգուցեալն առողջ կազմուածքի տէր էր, և իւր կեանքում ընդամենը 2 անգամ է հիւանդացել (մի անգամ խօլերայով)։

ԹԵՐԹՕՆ

ՕՐԱՏԵՏՐ

Երկուշաբթի.

Ճշմարիտ է ասած-վսեմից մինչև ծիծաղելին միայն մի քայլ կայ։ Րենանի յիշատակին նուիրած երեկոյեայ հանդէսը մի բաւականին կոմիկական վերջաբան ունեցաւ։ Ես արդէն ասել էի որ մերոնցից մի քանիսը, որոնք վայելուչ շոր չունէին՝ սև սերթուկ և բրիւկ ստացան մի խաչագողի պահեստից. այդ խաչագողը մեր կատաղի կուսակից դարձաւ այն օրից, երբ Կարոլինա Մօյսէեվնան մի բաւականին խոշոր գումար փող բան տուեց նորան վէքսիլով։ Սև սերթուկ հագած, մազերը Ալֆօնս Բոլլէյի պօմադայով օծուած, այդ պարոնները բաւականին յաջող կերպով խաղացին «լուսաւորութեան սիրող» կոչուած հանդիսականների դերը։ Թէև նոքա աթոռների զանազան կարգերումն էին նստեցրած, սակայն խաչագողն աչք ունէր պահած նոցա բոլորի վրայ. բայց և այնպէս երեքը նոցանից կարողացան ընդհանուր աղմուկի միջոցին անհետանալ դահլիճից, և մինչև յաջողեց գտնել նոցա, ժամանակ ունեցան սերթուկներն էլ, բրիւկներն էլ գրաւ դնելու։ Խաչագողը սաստիկ վշտացել էր.

—Այսպիսի հոգեհանգիստներն ինձ սառը քարի վրայ կը նստեցնեն, մի կտոր հացի հասրաթ կըթողնեն։ Այսօր երեք ջուխտ հագուստ Րենանի պատճառով, վաղը երեք ջուխտ Կոտիմի համար, վաղը չէ միւս օրը երեք ջուխտ Տարխունի համար, այդ խօ վերջ չի ունենալ։ Նա դատաստանին դիմեց, ի հարկէ հակառակ կուսակցութեան դրդմամբ։

Երեքշաբթի.

Այսօր այդ գործը քննուեցաւ դատարանում։ Երբ դատաւորը խօսում էր թէ երդմամբ տուած վկայութիւններն ինչ նշանակութիւն ունին և որ սուտ վկայելով մարդ պատասխանատու է ոչ միայն օրէնքի առաջ, այլ և այն աշխարհում ահեղ դատաստանի առաջ, մեր բոլոր կուսակիցներն աչքով էին անում միմեանց և ժպտում։ Մերոնց պաշտպանում էր Սանթրուսեանցը։ Դատաւորը ճնշուած էր յօգուտ մեզ տուած վկայութիւնների ծանրութեան ներքոյ։ Տասնևվեց վկայ երդմամբ ցոյց տուին, որ երեք մեղադրեալներն այդ օրը մինչև իսկ ներկայ չէին այն հանդիսին, որով Րենանը հայ ճանաչուեցաւ, այլ գտնվում էին մի ագարակում, որ մեր քաղաքից 20 վերստ հեռու է։ Ութ մարդ վկայեցին թէ իրանց աչքով տեսան. թէ ինչպէս մեղադրեալները յանձնեցին սերթուկները խաչագողին իւր պահեստում։ Վայելչագրութեան և հայոց ց'ջրհեղեղեան պատմութեան ուսուցիչը, որ հրաւիրուած էր իբրև էքսպերտ կողոպտողի նշանակութիւնը բացատրելու— ցոյց տուեց, որ նոյի տապանից դուրս գալու օրից սկսած, այնպիսի հանդէսներին, որպիսի է մէկին հայազգիների կարգը դասելը, միշտ մի քանի ջուխտ հագուստ են բաժանում հանդիսականներին, իսկ եթէ հայազգիների կարգը դասուողը ինտելիգէնցիային է պատկանում, Մոսկվայի տարազի շորեր բաժանելու իրաւունքը պատկանում է խաչագողներին։ Խաչակրաց պատերազմների միջոցին ղարաբաղցիք փորձ փորձեցին այդ իրաւունքը խաչագողներից խլելու, բայց նոքա Մոսկվայի բիրժեվոյ կօմիտետի օգնութեամբ և զօրաւոր Մանդլի առևտրական տան հովանաւորութեան ներքոյ յաջողեցան որ Ամալրիկ I-ը Երուսաղէմի թագաւորութեան ծովային օրէնքների մէջ արձանագրէ *) խաչագողների այս իրաւունքը. ղարաբաղցիք կարողացան ձեռք բերել միայն հետևեալ մենավաճառական իրաւունքը՝ «առաջին փրակը կարել այն անձանց համար, որոնք դասում են ինտելիգէնցիայի կարգը հայրենական չուխան հանելու միջոցով։ Այս պատճառով այդ համքարի դրօշակի վրայ նկարած է փրակով մի պարոն, որ ձեռքին «շապօ կլաք» ունի բռնած, իսկ ոտով շպրտում է մի բօխչա, որի մէջ փաթաթուած են արխալուխն ու չուխան։ Դրօշակի նշանաբանն է — «ինտելիգէնցիա շինող»։ Դատաւորը շնորհակալութիւն յայտնեց էքսպերտին այսպիսի մանրամասն ու գիտնական բացատրութեան համար և արդարացման դատավճիռ արտասանեց, որ բուռն ծափահարութիւններով ընդունուեցաւ։ Այն փաստաբանին, որ մեղադրում էր և զանազան բաներ էր դուրս տալի սեպհականութեան իրաւունքների մասին, ինտելիգէնցիան սուլեց դատարանից դուրս գալու միջոցին։ Խաչագողին՝ «դու դաւաճան ես» աղաղակներով զօրս դու պատուիրեցեր դնքսեցին այն փողոցում, ուր երբէք գարադավոյ չէ լինում։

Չորեքշաբթի.

Այսօր ծանօթացայ ես գործակալի դուստր Էլիզայի հետ։ Կարող եմ ասել որ ձեր հաւանած մի աղջիկ է։ Գիմնազիայի ութ դասատունն էլ աւարտել է, շատ յառաջադէմ հայեացքներ ունի և չափից դուրս զարգացած է։ Խոստովանում եմ որ նորա ներկայութեամբ ես մի փոքր կորցնում եմ ինձ։ Ո՛րքան ցաւալի է, որ այսպիսի զարգացած անձն կորչում է մեր յետ ընկած գաւառում՝ բայց կարծում եմ, որ երկար չի տևիլ այս։ Իւր գեղեցկութեան շնորհիւ նա շատ շուտ կարիերա կարող է անել։ Զարմանալի են մանաւանդ նորա աչքերը. որքան աւելի ես նայում այդ աչքերին, այնքան աւելի նոքա հանդիսանում են խորը, անյատակ իբրև ծով։ Նա բոլորովին թուխ է և ընդհանրապէս խօսելով նորա տիպն աւելի գնչուի քան հայկական տիպ է։ Թէև նորա դէմքի գոյնը թուխ է, բայց այտերը մուգ վարդագոյն են։ Նա շատ լաւ գիտէ իւր գեղեցկութեան և մանաւանդ ժպիտի ուժը, որ ցոյց է տալիս մի շարք մարգարտաշար ատամներ։

—Արդեօք մի հեգնութիւն չէ՞ այն հանգամանքը, որ մենք ղեւտացոց գերդաստաններին ենք պատկանում, նկատեցի ես կցնելով ծխախոտը։

—Այո, պէտք է ճշմարիտը խոստովանուեմ, իմ մէջ ես բնաւ կոչում չեմ զգում շաբաթը երկու անգամ մախօխ պատրաստել, իսկ ազատ ժամերին «տէր ողորմեա»» երգելը լսել... Միթէ դոցա համար եմ ես ութ դասատուն անցկացել. . .

—Սակայն, նկատեցի ես հազիւ յաղթելով յուզմունքս, ձեզ տէրտէրակին դարձնելու պատրաստութիւններ են տեսնում։

—Նրանց հօրն ողորմի։ Հայրս և մայրս յետադէմ խաւարամիտներ են և ես նոցա հետ մինչև անգամ այդ խնդիրների մասին չեմ էլ խօսում։ Դուք կը համաձայնէք, որ ես նոցա հետ ոչ մի ընդհանուր տեսակէտ չեմ կարող ունենալ ներկայ պրօգրեսիւ շարժման նրկատմամբ. . .

—Ինքն ըստ ինքեան հասկանալի է, նկատեցի ես, ինչպէս կարող են նոքա հասկրել ազատ սիրոյ գաղափարին։ Մեր մէջ մտքերի մի կենդանի փոխարինութիւն սկսուեց. ես նորան խորհուրդ տուի գնալ մայրաքաղաք բարձր կուրսերը մտնելու. Նա անկեղծութեամբ պատասխանեց, թէ մտադիր է գնալ, եթէ հարուստ փեսացու չը ճարէ։ Նա ի հարկէ կատակ է անում... Նա ինձ տուեց կարդալու իւր «շարադրութիւնը», որ գրել է վերջնական քննութեանց ժամանակ հետևեալ տեմայով—«Թէ ինչն է արգելում ձեր մարդու ամուսնուն երջանիկ լինել»։ մի շարադրութիւն, որ արժանացել է առաջին մրցանակի։ Բանից դուրս է գալի, որ երեսուն քննող օրիորդներից և ոչ մէկը, բացի Էլիզայից, չէ կարողացել հարկ եղած պատասխանը տալ այս հարցին. մի քանիսը մատնանիշ էին արել հասակների տարբերութեան վրայ, միւսները ձանձրութեան, նիւթական միջոցների պակասութեան վրայ, միմիայն Էլիզան պատասխանեց այնպէս, ինչպէս պահանջվում էր ըստ տեմայի, այն է թէ ձեր մարդու երիտասարդ կնոջ երջանիկ լինելուն կարող է արգելք լինել միմիայն «զարգացման պակասութիւնը»։ Իբրև օրինակ Էլիզան առաջ էր բերել Պուշկինի Տատեանային, որ յիմար նախապաշարմունքների շնորհիւ մերժեց Անեգինի հետ մտերմանալ, երբ սա յայտնեց նորան իւր սէրը։ Այս շարադրութեան առիթով «Անմահ Տէր» լրագրի մէջ երևեցաւ մի առաջնորդող «Վերջապէս» վերնագրով։ Այս յօդուածի մէջ խմբագրութիւնը յայտնում էր իւր անսահման բերկրութիւնը և շնորհաւորում էր թէ հայոց ազգը և թէ հայ քահանայական դասը, որի փէշած մթնոլորտից դուրս են գալի ույժեր, որոնք այդպիսի չոյսեր են տալի։

«Երբ, ասուած է այդ յօդուածում, կրթութեան հիմքը կազմում են առողջ դատողութիւնները, որոնց բազիսը բնութեան օրէնքների ուսումնասիրութիւնն է, երբ նոր սերնդի ուղեղը չեն ծանրաբեռնում այնպիսի խլամօղ, որ հակասում է նորագոյն գիտութեան, այն ժամանակ ահա ստացվում են այսպիսի արդիւնքներ, որ մենք այս օրվայ առաջնորդողով ողջունում ենք։ Մեծ զանազանութիւն կայ կնոջ այն կրթութեան մէջ, որ հիմնված է պասի և ձէթի վրայ, և այն կրթութեան, որ հիմ-

*) Տես մեր Աղէքսանդր Ե.-ի, դժբաղդաբար, տակաւին լոյս չտեսած աշխատութիւնը «Դերձակների համքարը Լուսինեանների հարստութեան ժամանակ» հատոր VI, մաս III, գլուխ 17, եր. 895։

ցուող կոկոնը։ Հռիփսիմէն էլ սիրուն էր նոր բացուող կոկոնի նման և շատերի ուշք ու միտքն էր գրաւել, շատերը խնդրել էին նրա ձեռքը, բայց ծնողները յարմար չդատելով՝ մերժել էին նրանց։ Հռիփսիմէի ձեռքը խնդրողներից մէկն էր նա և իրանց հարևանի որդի Սարգիսը, որ ոչ մի կըազմունք չունէր և պարապ սարսափ չափչփում էր Թիֆլիզի փողոցները իւր կեանքն անցկացնելով գինետներում։ Հռիփսիմէն նրա խելքն ու միտքն էր տարել՝ նա խելագարի նման տխրում էր նրան և գիշեր ցերեկ նրա վրայ միայն մտածում։ Նա խնդրեց նրա ձեռքը, վստահ որ իրան պիտի մերժեն, և յիրաւի որ Պետրոսը արհամարանօք մերժեց։ Այդ ժամանակ բարկութեամբ լի Սարգիսը սպառնաց Պետրոսին և ուզեցաւ սպառնալիքներով վախեցնել նրան, բայց Պետրոսը հանաք կարծեց և ամենևին ուշք էլ չդարձրեց նրա սպառնալիքների վրայ, թէև համոզուած էր, որ Սարգիսը սրիկայ է և ձեռքից ամեն ինչ դուրս կը կը գայ,

Անցաւ այդ օրից ուղիղ մի տարի երբ Պետրոսը նշանեց իւր աղջկան. Նա ամենևին մոռացել էր Սարգսին, թէև վերջինս գաղտնի հետևում էր Հռիփսիմէին և ամեն անգամ Հռիփսիմէին տեսնելիս չէր հեռացնում նրանից իւր գազանական աչքերը։ Բայց թէ նա սիրում էր Հռիփսիմէին անկեղծ սիրով, թէ միմիայն գազանական կիրք էր—չգիտեմ, միայն թէ նրա սրտի մէջ օր աւուր ամբարվում էր վրէժը, ատելութիւնը և նախանձը դէպի Պետրոսն ու Գուրգէնը. և երբ Գուրգէնը նշանուեց Հռիփսիմէի վրայ, նա համարեա գիշեր ցերեկ գաղտնի հետևում էր և նշանուածների ամեն քայլափոխը դիտում։

III

Թիֆլիզից Զ... գիւղը տանող ճանապարհի վրայ, ճիշդ այնտեղ, որտեղից սկսվում են թուփերն ու մացառներն առատութեամբ երևալ, որտեղից սկիզբն են առնում Կ... ապակու գործարանի անտառները, գտնվում է մի խանութ, ուր յաճախ գիշերում են Թիֆլիզից դէպի Զ... գնացող ճանապարհորդները։ Թիֆլիզից եկողի համար հրաշալի տեղ է համարվում այդ խանութը, երբ Թիֆլիզի շրջակայ անջրդի և անապատ տեղերով անցնելուց յետոյ մտնում է այդ խանութի շրջակայքը, ուր յիրաւի զգացվում է օդի թարմութիւնը և անուշահոտութիւնը։ Խեղդող և կիզիչ օդից յետոյ ճանապարհորդը կանգ է առնում այդտեղ փոքր ինչ կազդուրուելու, հանգստանալու և ապա շարունակելու իւր ճանապարհն անտառի միջով, որոնց ծառերի ստուերները պաշտպանում են նրան արևի կիզիչ ճառագայթներից, իսկ օձաձև պտըտուող առուակը քարերի վրայից թռչկոտելով, այս ժայռին այն ժայռին քսուելով ահագին շառաչմամբ հոսում է ներքև ձեր հակառակ ուղղութեամբ։

Երեկոյ էր. վերոյիշեալ խանութի առաջ, փշեայ ցանկապատի մէջ նստած են երկու հոգի և ընթրիք են վայելում։ Գինին առատութեամբ խմվում էր, իսկ խորոված ախորժակները բանում։ Նրանցից մէկը կլինէր մօտ երեսուն տարեկան, իսկ միւսը նրանից քիչ պակաս։ Երկուսն էլ հագած ունէին երկայն չուխա, երկար ճտկաւոր կօշիկներ և երկուսի գօտկից էլ կախուած էին մի-մի խանչալ (դաշոյն) և մի-մի ատրճանակ։

Բացի դրանցից խանութում ճանապարհորդներից ոչ ոք չկար, իսկ խանութպանը, որ մի յոյն էր, խոնարհ ակնածութեամբ ծառայում էր դրանց. ըստ երեւոյթին նա դրանց վաղուց էր ճանաչում և նրա դէմքին նայելով կարելի էր գուշակել, որ շատ էլ գոհ չէր իւր այդ երկու հիւրերից։

Բայց գինին տաքացնում էր հիւրերի գլուխը և մի չարէքանոցը միւսի ետևից դատարկվում։

—Սաքի, թազա ձուկ կ'ունենաս, այս ջրում լաւ կարմրախայտներ են լինում, բեր տեսնենք, ասաց հիւրերից մէկը դիմելով խանութպանին, որ խորոված կըրակն էր փչում։

—Չէ, Սարգիս-աղա, դեռ չեն բերել, տղերքը գնացել են, բերեն թէ չէ, խսկոյն համեցէք կ'անեմ, պատասխանեց խանութպանը և ուզում էր մտնել խանութ, երբ Սարգսի ընկերը կանգնեցրեց նրան.

—Կաց, ո՞ւր ես փախչում, արի մի բաժակ գինի խմիր։

Սաքին մօտեցաւ նրանց, առաւ գինին և օրհնեց նրանց։

—Հը, Սաքի, այսօր քեասաթ ես երևում, չգրած ես, ճանապարհորդներ չունիս։

—Ձեզ նման տղերանցը Աստուած չէն պահի, ինչու կըլինիմ չգրած, դեռ վաղ է, շուտով Փուրգոնները կ'երևան և խանութումս ասեղ ձգելու տեղ չի լինի։

—Դէհ, նստի քէֆ անենք, մինչի քո ճանապարհորդների գալը։ Սաքին նըստեց և նրանք երեքով սկսեցին գինի խմել. այդ միջոցին ճանապարհի վրայ երկու Փուրգոն երևեցան և քիչ յետոյ ներս մտան Սաքիի խանութի ցանկապատը։ Փուրգոնները լցուած էին ընտանիքներով, որոնք գնում էին Զ... ամառանոց։

Սաքին ուրախացաւ, որ պատճառ գըտաւ այդ երկու հիւրերից անջատուելու և խսկոյն վերկացաւ սեղանից։

Երբ երկու հիւրերը, որոնցից մէկը մեզ ծանօթ Հռիփսիմէի հարևանն էր, տեսան Փուրգոնների միջի ուղևորներին, աչքերը չորս արած դիտում էին սրան նրան, կարծես թէ մէկին փնտրում էին, բայց երբ չերևեցաւ նրանց ուզած ճանապարհորդը, նրանք կրկին սկսան շարունակել իրանց կերուխումը։

—Չէ, նա ձիով կը գայ, ես այդ հաստատ իգտեմ, ասաց Սարգիսը իւր ընկերին։

—Բայց կարելի է այսօր այստեղ չի գալու։

—Ինչպէս չէ, բաս ո՞րտեղ կը մնայ, նեմեցների մէջ չի կանգնի, որովհետև օրը կէսօրին այստեղ կը հասնի, իսկ նա նա շտապում է շուտով տեղ հասնել և հարսանիք անել, ասաց Սարգիսը, հեգնաբար արտասանելով հարսանիք բառը։

—Բայց ինչ ես կարծում փող էլ կ'ունենա՞յ թէ չէ։

—Ինչպէս չի ունենայ և եթէ չունենայ էլ, ինչ իմ հոգսն է։

—Ի՞նչ ես ասում, բաս դատարկ ձեռներով պէտք է վերադառնա՞նք։

—Չէ, արխային կաց, այնքան էլ քեասաթ չի լինի, որ մեզ դատարկ ճանապարհ ձգի։

—Իսկ եթէ նա գիշերն այստեղ մնայ և առաւօտը ճանապարհը շարունակի։

—Վնաս չկայ, Աստուած այն խոր ձորը չէն պահի, նրանից գէնը՞չենք թողնի անցնի, իսկ եթէ գժուի և գիշերով ճանապարհը շարունակի, հօ աւելի լաւ։

Նրանք ծածուկ իրար մէջ քչփչում էին. հետզհետէ խաւարը ծածկում էր ամեն ինչ և կամաց - կամաց բակը լցվում Փուրգոններով և ճանապարհորդներով։

Երկու ճանապարհորդները դիտմամբ ճանապարհին շատ մօտ էին նստել, որ տեսնեն անցնող գնացողին, այդ միջոցին Սարգսի ուշադրութիւնը գրաւեց մի սև կէտ, որ ճանապարհի վրայով արագութեամբ դէպի խանութն էր գալիս։

— Էհը՞, գալիս է. նա պէտք է լինի։

Ընկերն էլ նայեց այն կողմը և տեսաւ, որ մի ձիաւոր մարդ շտապ վազեցնում էր իւր ձին դէպի խանութը։ Եւ երբ ներս մտաւ այդ ձիաւորը, Սարգիսը և իւր ընկերը մի այնպիսի վայրենի աչքերով նայեցին այդ երիտասարդ ճանապարհորդի վրայ, որ մի սարսուռ անցաւ նրա մարմնով և արագութեամբ հեռանալով նրանցից ձիից ցած թռաւ բակի միւս կողմը։

նըված է բնութեան օրէնքների ազատ ընթացքի վրայ. . . «Առաջ», ասացինք մենք անցեալ անգամ. նոյնը կրկնում ենք և այժմ՝ «առաջ», որովհետև մենք միշտ հաւատարիմ ենք մեր ուղղութեան: «Բարի ճանապարհ», ասացինք մենք անցեալ համարում, հաղորդելով այն ուրախալի լուրը, որ Իգդիրից երեք օրիորդ ուղևորվել են Ցիւրիխ այն խնդրը ուսումնասիրելու համար թէ մանանեխն ինչ ազդեցութիւն ունի յիշողութեան զարգացման վրայ: «Բարի ճանապարհ, կրկնում ենք մենք և այսօր, որովհետև մենք ուրիշների պէս չենք, մենք միշտ հաւատարիմ ենք մեր նշանաբանին»:

«Մենք աւելի երջանիկ կլինէինք եթէ Իգդիրից Ցիւրիխ երեք օրիորդների գնալու լուրը հաղորդելուց յետոյ, կարողանայինք յայտնել որ Հին-Նախիջևանից արդէն ուղևորվել են ոչ թէ Ցիւրիխ, այլ Փընէվ գարձեալ մի նուազն երեք օրիորդ նոյնպիսի գիտնական նպատակով, օրինակ՝ ուսումնասիրելու թէ ինչ ազդեցութիւն ունի կաղամբն ուղեղի մէջ ֆօսֆօրն աւելացնելու»:

«Սպասում ենք»,

Ելիզալի հետ բաժանուեցանք եբրև լաւ բարեկամներ:

Ուրբաթ.

Վերջապէս ստացուեցան Թիֆլիզի լրագրները, ուր նկարագրուած են մեր հանդէսները, Ռենանի յիշատակին նուիրած:

Իմ թղթակցութիւնն ամենամանրամասն է և հետաքրքրականը: Դէպքից օգտուելով յօդուածի մէջ ի միջի այլոց յիշեցի, թէ ինչպէս է վերաբերվում դէպի մեր բարեգործական և ուսումնարանական հաստատութիւնները մեծապատիւ կապալառու և կրեսոս Մինասը, որին այս առիթով մինչև անգամ Մելիքի անուն տուի: Ես բազմաթիւ փաստեր առաջ բերի, թէ որքան խնամք ունի նա մեր դպրոցի բարգաւաճման համար, թէ որքան մեծ մաս ունի նա հոգեբանութեան և մանկավարժութեան ծրագրի կազմելու խնդրում. յիշեցի նաև թէ ինչ հարցեր էր առաջարկել նա աշակերտներին քննութեան ժամանակ ծխական դպրոցում աստղաբաշխութիւնից: Լրագրների ստանալուց երկու ժամ չանցած մշակը Մելիք-Մինասի կողմից ընծայ բերեց հինգ գլուխ պանիր, մի քիլա կարագ և տասը հատ հիանալի սիգար: Իմ ծնողները կարծես սկսում են յարգանք տածել դէպի իմ գրականական պարապունքները:

Շաբաթ.

Ես, կարծես մօդնի անձնաւորութիւն եմ սկսում դառնալ: Այսօր ճաշի էի հրաւիրուած մեծաւորի մօտ. վաղը հրաւիրուած եմ Մինասի մօտ գրականական երեկոյի. Կարօլինա Մօյսէեվնան յատուկ խնդրեց ինձ մի օր և է բանաստեղծութիւն կարդալ այդ երեկոյին: Մեծաւորը ճաշից յետոյ տարաւ ինձ կաբինետը, նստացրեց բազկաթոռի վրայ, առաջարկեց մի սիգար—բոլորովին այնպիսի, ինչպէս ուղարկել էր ինձ Մինասը—արդեօք մի աղբիւրից չենք ստանում երկուսս էլ —և բաւականին երկար պատմում էր թէ ինչ պատճառով գաւառում զարգացել են անասուններ փախցնելու և կրակ տալու յանցանքները:

Սակայն պէտք է պատրաստուեմ վաղուան գրականական երեկոյին: Արդեօք ինչ նիւթ ընտրեմ:

[illegible]

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՐԵՆՑԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԸ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱՅ *)

Ես հոս գալու կը դանդաղէի. գիտէք՝ այսինքն լսեր էք որ ժամանակ մը կայ որ զմարդ դանդաղ կընէ. բայց երկու բան կայ որ միշտ սիրելի է անոնց՝ որ երբ չեն շարժել աշխոյժը կորսնցնեն ալ, եռանդը զոհած ալ ըլլայ իրենց համար, լքումը պատած ալ ըլլայ զիրենք, դարձեալ երկու բան կայ որ զիրենք կոգևորէ, իրենց բոլոր անտարբերութիւնը կը տարուբերէ և սառած երակներուն մէջ նոր ջերմ և հրաշէկ արիւն կը բերէ, և այս երկուքը՝ հոս աս ոսկորներու մահուան հողի վրայ՝ մէկը՝ աս շիրիմը՝ կը ներկայացնէ Պէշիկթաշլեան և անմահութիւն, միւսը դուք կը ներկայացնէք, երիտասարդութիւն, յոյս, գարուն և ապագայ:

Եւ միթէ ապագային նախատես ոգին չէ՞ր որ գրուցել կուտար Պէշիկթաշլեանի:

«Բազմելով շիրմիս վերայ գոչեցից,
«Տես զիարդ գեղեցկայոյց զիս մահ,
«Արար զիս տարփելի:»

Ճիշդ նոյն ոգին որ կոյով մը կը բերէ անոր՝ որ ահագին ծովուն տըրկար փայտին յեցեալ անծանօթ նըպատակին ուր կը դիմէ, ուրախ զուարթ կերթայ՝ կամ Քոլոմպոս մը փառք շղթայ և դափնիներ ժողովելու կամ որ նոյն է, քեզի պէս երիտասարդութիւն, որ աս աշխարհիս անդունդին վրայ կերթաս գայթ ի գայթ ժողովելու համար բերկրանք, նեղութիւն, ծաղիկ և փուշ:

Բայց դարձեալ ի՞նչ կայ աւելի սիրուն քան զերիտասարդութիւն՝ որ սէր կը հնչէ, քան զանմահութիւն, որ յոյս է:

Ես ալ եկայ զձեզ տեսնելու, զձեզ ապագայ, զձեզ յոյս, զձեզ երիտասարդութիւն և Պէշիկթաշլեան իր շիրմին վրայ իր անմահութեան մէջ գեղեցիկ ձեզմով, կենդանի ձեզմով, տարփելի ձեզմով, ինչպէս ինք յուսահատ տխուր կը հաւատար և կը դուշակէր երբեմն. Թող չի գրուցէ հանճարը թէ անոր է, թող չի գրուցէ թէ անժառանգ է, թող չի գրուցէ թէ աղքատ է. վասն զի իրեն համար երիտասարդութիւնը՝ միշտ ազնուական՝ որ կը ձայնէ թէ ես եմ քու ժառանգդ, ես եմ քու զաւակդ, ես եմ քու հարստութիւնդ, և ահա երբ անդին՝ շուրջանակի գրեթէ մոռացօնք և լռութիւն կը պատեն, հոս հանճարին յիշատակը կենդանի ծաղկապսակ իր փառաց մէջ կը տեսնուի ձեզմով:

Այս հանճարն իր սերունդն ունի, իր յաջողութիւնն ունի. վկայ երիտասարդը. որ քսան տարեկան հոն դիմացի Ասիական ափանց վրայ աստղ պէս, կը հնչէ, նոյն կիրքերով, նոյն եռանդեամբ, նոյն ոգւով, նոյն հիւանդութեամբ, նոյն վախճանաւ. պանդուխտ հայուն՝ երբ այդ վարը ջրէ հովտին վրայ, կը տատանի մրմնջելու սրտին թէ՝ յաջ ու ձախ այդ բլուրներուն վրայ փոխ ոգիներ կան որ օտարութիւնը կը քաղցրացնեն: Մինթէ ձեր սրտերը՝ լի ազնուական զգայմամբք՝ որ զձեզ հոս կը ժողովէ գեղուն չէ, և չի գրուցեր, չի յիշեր միշտ Աստուած, յաւիտենականութիւն, անմահութիւն, գութ, եղբայրսիրութիւն, բնութիւն, բարեկամութիւն, սէր և ազգասիրութիւն, յար և նման Պէշիկթաշլեանի պէս, և սրտեր՝ որ ասոնց հակառակուն են զգածեալ. կան, և ինչ կրնան փնտրել...:

Հոս չեն անոնք, վասն զի անոնց ներկայութիւնը ձեր մէջը ատելութիւն մէ, և Պէշիկթաշլանին շունչը իրենց համար թոյն մըն է, վասն զի ինչ կը քարոզեն իրենք... նիւթականութիւն, սահմանափակութիւն, ապերախտութիւն, ատելութիւն և գործքով... Թողէք այդ սերունդը իր անարգութեան մէջ թէ որ կարելի է յառաջադիմութեան վազողին չը տեսնել և չզգուշանալ անարգ քարէն՝ որ խոչ և խութ է ոտին, և ինձի սիրելի է տեսնել և յուսալ հայ երիտասարդութիւնը, ապագային Պէշիկթաշլեանի պէս բարձրանալ առ Աստուած մաքուր բարոյականով, զգալ անոր պէս եղբայրսիրութիւն, ոչ միայն իր բնիկ հարազատէն տանելով սէրը, գերեզմանէն անդին ողբալով «զեղբայրն վաղամեռիկ», այլ նաև ընդարձակելով եղբայրսիրութեան ասպարէզը, տեսնել անոր աչքով բնութիւնը ոգևորեալ անսքանչելի մտաւոր լուսով. հաւատալ անոր պէս բարեկամութեան, յուսալ բարեկամութեան և գերեզմանին ափանց վրայէն ձեռք կարկառել բարեկամին և անոր արցունքով խնդրել մխիթարութիւն, սիրել անոր պէս սիրով որ կը բարձրացնէ, սիրով որ յանմահութիւն կը տանի, սիրով որ մաքրութեան աղբիւր է, սիրով որ սրտի ազնուութիւն կը պարգևէ, սիրով որ աս խոնարհ բըլուրը՝ ուր անոր աճիւնները կը պարփակին՝ իբրև Ոլիմպոս կը բարձրացնէ: Այս սիրելի է ինձ յուսալ առողջ ազգասիրութիւն անոր հոգւով կենդանացեալ յերիտասարդութեան՝ որ ազգին զաւակները միացնէ և կապէ:

Մանաւանդ հիմա որ հիւանդ ոգիներ ատելութիւն և նախանձ կը փչեն, ամեն տեղ կըսպրդեն... և ո՛ գիտէ թէ մեր հաւատքը խաբելով հոս ձեր մէջ նաև մտած ըլլան. և «Եղբայր ես ես» ձայնին, «Եղբայր չես ես» կը պատասխանեն ազգատեցութիւնն ազգասիրութեան քողով կը ծածկեն, և բարեկամ ինքզինքնին ան մարդուն՝ ան Պէշիկթաշլեանին անուանել կը ժպրհին անոնք՝ որ բարեկամութիւն չեն զգացեր և ոչ օր մը կեանքերնուն մէջ, երբ ազգութեան սահմանը կը պղտորցնեն, կը նեղցնեն իրենց ուղեղին պէս, և չեն հասկնար թէ երիտասարդութիւնըն այս գերեզմանին վրայ կը բողոքէ այդ դաւաճան սահմաններուն դէմ. վասն զի թէ որ ինք հոս է՝ անոր համար հոս է, որ այդ շիրմին վրայ կանգուն կը կենայ անոր ըստուերը, որ ո՛չ բաժանմունք, ո՛չ խեռ, ո՛չ ատելութիւն՝ այլ միութիւն, սէր, եղբայրութիւն երգեց՝ քարոզեց և վարդապետեց, «և ծունր դնելով մեր պատմութեան անհուն դամբանին առջին», յառաջադիմութեան յորդորելով իր ընկերը, և «այդ անեզր ճանապարհորդութեան դժուարութեանց ու վտանգաց մէջ զիրար աւելի աղէկ ճանչնալու համար իրարու եղբայր անունը տուէք» գրուցողը՝ քրիստոսական կտակ մը կնէր: Ինձ դադրել ու լռել միայն կըմնայ այս խօսքերուն զօրութեան առջին:

*) Մեծ. պ. Զարեհ Տիտանեանը Կ. Պօլսից ուղարկել է մեզ անմոռանալի դ-ր Յ. Չիշմանեանի այս հիանալի դամբանականը, որ նա արտասանել է 1872 թուի նոյեմբերի 4-ին, Պէշիկթաշլեանի գերեզմանի վրայ կատարուած հոգեհանգստին: Անցեալ տարի պ. Տիտանեանը մեզ ուղարկեց Խաչատուր Աբովեանի մի անտիպ գրութիւն («Արձագանք» № 71, 1892 թ.), այսօր նա առիթ է տալիս մեզ Յ. Չիշմանեանի 6-րդ տարեդարձի առիթով մի մեծ վայելչութիւն պատճառել մեր ընթերցողներին տաղանդաւոր մատենագրի մի անտիպ գրուածքը հրատարակելով: Տ. Խ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԱՏԻԿԱՆԸ և ՖՐԱՆՍԻԱՆ

«Արձագանքի» անցեալ համարներից մէկում մենք աշխատեցինք ցոյց տալ, թէ ինչ հեղինակութիւն է վայելում ամբողջ Եւրոպայում Հռոմի պապը և թէ Լևոն XIII-ի ծրագիր բարեմասնութեանցն է պարտական Վատիկանը իւր արդի նշանակութիւնը: Գրեթէ բոլոր եւրոպական տէրութեանց պետերը յատուկ նամակներով ու առանձին պնդագեսպանների ձեռքով շնորհաւորել են կաթոլիկ եկեղեցու գլխի եպիսկոպոսութեան յիսնամեակը: Այդ արդէն ինքն ըստ ինքեան մի ապացոյց է, թէ ինչ ջանքաշու դիրք է կարողացել ըստեղծել իւր համար Լևոն XIII պապը: Խօսք չկայ որ Հռոմի պապի դրութիւնը քաղաքական տեսակէտից խիստ տարբերվում է այն եկեղեցապետների դրութիւնից, որոնց ոչ միայն գործունէութեան պայմանները, այլ և նոյն իսկ վիճակը կախուած է որևէ աշխարհիկ իշխանութեան տրամադրութիւնից: Պապն ընտրվում է և այլ ևս ոչ մի հաստատութեան կարօտ չէ ում և է կողմից իւր հօտի հոգևոր պէտոյքները հոգալու, նորա կրօնական բոլոր պահանջներին և հոգևոր դաստիարակութեանը կատարելապէս գոհացումն տալու համար: Բոլոր տէրութեանց մէջ ապրող կաթոլիկ համայնքներն արդէն պապի բարձր հովանաւորութեան ու պաշտպանութեան ներքոյ են գտնվում և վայելում են անպայման կրօնական ազատութիւն, ունենալով հանդերձ իբրև եկեղեցական համայնք միանգամայն ինքնուրոյն վարչական իրաւունքներ: Պապը մի տեսակ միջազգային որոշ ու հաստատուն դիրք ունենալուց յետոյ՝ անշուշտ միշտ հնարաւորութիւն ունի անվեհերութեամբ պաշտպան հանդիսանալու իւր հօտի ամենատեսակ շահերին, եթէ որևէ կառավարութեան կողմից վտանգ սպառնալու լինի նոցա: Եւ այդ հայեցակէտից հարկաւ պապի դրութիւնն այն հովուապետների դրութեան հակապատկերն է, որոնք երբեմն իրանց ամբողջ հօտի միահամուռ ընտրութեամբը յաթոռ կոչուած լինելով հանդերձ՝ տարիներով մնում են հեռու իրանց նուիրական կոչմանը ծառայելուց շնորհիւ այն հանգամանքի, որ դարերով սրբագործուած իրաւունքներն ու արտօնութիւններն այսօր ոչ մի միջազգային սահմանադրութեամբ հաստատուած չեն: Բայց թէ որքան պապը ջանադիր է՝ իւր քաղաքական դիրքի շնորհիւ, ընդլայնելու իւր եկեղեցու աթոռի նշանակութիւնն ու ազդեցութիւնը, երևում է, օրինակ, այն հետաքրքրական փաստից, որ եւրոպական լրագրներն են հաղորդում:

Լևոն XIII-ը, որ արդէն իսկ բաւականին կարևոր դեր է կատարել Ֆրանսիայի ներքին կեանքի մէջ, այժմ կամենում է բոլորովին իրականապէս միջամտել առաջիկայ ընտրութիւններին, որ շուտով երևի տեղի կ՚ունենան Ֆրանսիայում: Կարդինալ Ռիշարը պապի առաջին խորհըրդական կարդինալ Ռամպոլլայի հետ միասին մշակել են՝ Լևոն XIII-ի անմիջական հսկողութեան ներքոյ, մի ծրագիր այն ֆրանսիացի կաթոլիկների համար, որոնք միացել են հասարակապետականների և հաշտուել հասարակապետական կառավարութեան հետ (raliés). այդ ծրագրով պիտի գործեն նոքա առաջիկայ ընտրութիւնների ժամանակ:

Պապի այս ցանկութիւնը միանգամայն հասկանալի է դառնում, երբ մարդ աչքի է անցնում այն սրտագին շնորհաւորութիւնը, որ Կարնօն յատուկ նամակով հաղորդել է պապին Վատիկանի ֆրանսիական դեսպանի ձեռքով և մանաւանդ պապի պատասխանը, որ հրատարակուած է Osservatore Romano թերթի մէջ:

—

ՖՐԱՆՍԻԱ.—Նորերս Փարիզում մի աչքի ընկնող դէպք է տեղի ունեցել, որ չափազանց զայրացրել է գեղեցիկ սեռին և նորա երկրպագուներին: Սօրբօնի երիտասարդ պրօֆ. Լառումէի դասախօսութեան ժամանակ ուսանողները մեծ աղմուկ են բարձրացնում և ահագին դուռում գոչումով պահանջում են որ դասաթեան ներկայ եղող կանայք հեռանան լսարանից: Աղմուկն այնպէս սաստկանում է, որ պրօֆեսօրն ստիպուած է լինում դադարել խօսելուց: Այդ դէպքը նորանով են մեկնում, իբրև թէ կանայք միշտ վաղ գալով դահլճի լաւագոյն տեղերն են բըռնում, և իսկական ուսանողներն ստիպուած են լինում բաւականանալ վերջին տեղերով: Պր. Լառումէն յայտարարել է, թէ ինքը իսկական ուսանողների շահերն աւելի բարձր է դասում, քան կանանց և առհասարակ կողմնակի այցելուներինը:

Այժմ ուսանողներից ոմանք անցել են կանանց կողմը և բողոք են պատրաստում լուսաւորութեան նախարարին տալու համար, որ նորից կանանց իրաւունք տրուի յաճախելու պր. Լառումէի դասախօսութիւնները դ յիշեալ դէպքի նման անկարգ վարմունքների առաջն առնուի:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Մարտի 4-ից.

ՓԱՐԻԶ.—Դատական պրօկուրօրը վերջացրեց իւր ճառը, պահանջելով որ խիստ պատիժներ տրուին մեղաւորներին, առանձնապէս Լըսեպսին և Ֆօնտանին, որոնք պատճառ են եղել այսքան թշուառութիւնների:

Մարտի 5-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Գերմանական ռայխստագի պատերազմական յանձնաժողովում այսօր սկսուեց զինուորական օրինագծի երկրորդ ընթերցումը: Կենդրոնն առաջարկեց կառավարութեան նախագծի դէմ իւր կողմից մի նախագիծ: Այդ առաջադրութեան մէջ կառավարութեան նախագծում նշանակած խաղաղութեան ժամանակ զօրքի քանակութիւնը՝ 492,008 հոգուց իջեցրած է 420,031 հոգու մինչև 30 հոկտ. 1898 թ.: Բենինգսէնն առաջարկեց սահմանել զօրքի քանակութիւնը խաղաղութեան ժամանակ 462,000 հոգու չափ և որոշել, որ 123 գունդերի կադրները կազմակերպեն միմիայն այնքան ժամանակով, ինչ չափով որ հետևակ զօրքի ծառայութիւնը երկու տարով կը լինի հաշուած: Կայսերութեան կանցլերը յայտարարեց, թէ «կենդրոնի առաջադրութիւնը չի կարելի ընդունել, իսկ Բենինսէնի ա-

---

—Ցիմար, բոլորովին անզէն է ճանապարհորդում, կարծես աշխարհի տէրը ինքը լինի և ոչինչ երկիւղ չունենայ, ասաց Սարգիսը և գինին թող տալով աչքով սկսեց հետևել նրան:

Իսկ Նորեկ ճանապարհորդը, որ մեզ ծանօթ Գուրգէնն էր, ամեննին չէր էլ կասկածում թէ իւր հակառակորդ Սարգիսն է այդտեղ նստած և թէ իւր կեանքի դէմ դաւադրութիւն է կազմում: Նա իրան ապահով էր կարծում, մանաւանդ այդքան բազմութեան մէջ:

Գուրգէնը ձիից ցած թռչելով հրամայեց գարի ու խոտ տալ ձիուն, իսկ ինքը հանելով իւր պաշարեղէնները և սկսեց ուտել: Ճանապարհորդութիւնը նրան շատ քաղցածացրել էր:

IV

Լիալուսինը նոր բարձրացել էր հորիզոնից և արծաթազօծել շրջակայքը: Սիրուն գիշեր էր, որ ցերեկի պէս էր փայլում: Խորհրդաւոր լռութիւնը խանգարվում էր առուակի խոխոջալով և այն սայլերի ճռճռոցի ձայնով, որոնք անցնում էին Սաբինի խանութի առջով:

Գուրգէնը իւր ընթրիքն արաւ, կերաւ կշտացաւ, իւր ձիուն էլ կշտացրեց, բայց մի տեսակ անհասկանալի անհանգստութիւն տիրել էր նրան, նա սաստիկ շփոթուած և այլայլուած էր: Բայց թէ ինչ էր իւր այլայլութեան պատճառը՝ նա չէր կարողանում բացատրել, միայն թէ քանի աչքը ձգում էր Սարգսի կողմը, այնքան նրա շփոթմունքն աւելանում էր: Նա ընկել էր խոր մտածմանց մէջ և չգիտէր ճանապարհը շարունակի, թէ գիշերի. իսկ եթէ գիշերի այդ երկու ճանապարհորդների ներկայութիւնն անտանելի էր, նա ուղղակի զզվում էր ու վախենում: Մի ներքին ոյժ հեռու էր մղում Գուրգէնին դրանցից, ուստի նա վճռեց աննկատելի կերպով հեռանալ այդ խանութից, այդ երկու զզուելի ճանապարհորդներից:

Նա հեծաւ ձին, և նետի արագութեամբ սլացաւ առաջ:

Ա՜խ, ինչքան ցանկանում էր այդ րոպէին լինել իրանց գիւղում և կամ նըստած իւր նշանածի մօտ քաղցր զրոյց անելիս. և նա մտրակ մտրակի ետևից իջեցնում էր խեղճ ձիուն, որ արդէն քափ ու քրտինքի մէջ էր: Բայց ճանապարհը շատ երկար էր, անվերջ, նա նշան էր դնում թմբի վրայի օձապտոյտ երևացող ճանապարհին, հասնում էր նրան, բայց իւր առաջ նոր ճանապարհ էր բացվում, կրկին անվերջ, կրկին անսահման...

Նրա շփոթմունքը հետզհետէ աւելանում էին, գիշերային խորին լռութիւնը և առուակի տխուր խոխոջալը նրա ջղերըն էին գրգռում և նրան ձգում յուսահատութեան մէջ. նա արդէն փոշմանում էր, որ գիշերը ճանապարհ ընկաւ, երբ իւր առաջը բացուեցաւ մի խոր ձոր: Երկու կողմից ահագին ժայռերն իրանց գըլուխները մի-մի ամ-դահանների նման դուրս էին ցցել և ճանապարհի երկու կողմը բռնել, իսկ մի ժայռի գլխին երևում էին կիսաքանդ աշտարակների փշրանքները, որոնք գիշերային խաւարի մէջ սարսուռ էին ձգում մարդու մարմնի մէջ:

Եւ այդ բաւական չէր, բնութիւնն աւելի ահռելի անելու համար երկու ձորերից կատաղաբար շառաչելով, փրփուր հանելով, դուրս էին վազում լեռնական երկու վտակներ և երկու հսկաների նման իրար վրայ վազում, կռվում, փրփրում, կտոր-կտոր լինում և ապա եղբայրանալով գլորվում ցած...

Գուրգէնը ներս մտաւ այդ ձորը և մի տեսակ անհասկանալի դող անցաւ նրա մարմնի միջով. նա ձիու սանձը քաշեց և կամաց սկսեց այդ մութ ձորը մտնել, ուր դեռ չէին թափանցել լուսնի ցուրտ ճառագայթները:

Դեռ մի քանի քայլ չէր արել Գուրգէնը, երբ ետևից ձիան ոտքերի դոփիւններ լսեց. նա յետ նայեց և տեսաւ երկու ձիաւոր. որոնք արագութեամբ քշում էին ձիերը: Խաւարի մէջ նա ճանաչեց նրանց. այդ նրանք էին, խանութի երկու անտանելի ճանապարհորդները. փախի՛ր սրանցից, փախի՛ր, ու Գուրգէնն ուժգնութեամբ մտրակեց իւր ձիուն, ուշիմ ձին մի թըռիչք արաւ և սլացաւ առաջ. . .

Հետևող ձիաւորները նկատեցին և նրանք էլ մտրակեցին ձիերին: Կարճ ժամանակ անցաւ և նրանք հասան Գուրգէնին, որի ձին գլպչելով մի քարի չոքել էր իւր երկու ոտքերի վրայ:

Սարգիսը և իւր ընկերը բռնելով Գուրգէնին, որ պաշտպանուելու ոչ մի զէնք չունէր, ճանապարհից դուրս հանեցին նրան, ուր իջնելով ձիերից վայրենիների նման վրայ վազեցին Գուրգէնին, որի լեզուն կապուել էր և խելք ու միտքը կորել. բայց երբ տեսաւ Սարգսի ձեռքին մերկացրած սուրը, նա դողդողաց և ծունկ չոքելով կանչեց:

—Խնայի՛ր ինձ, խնայի՛ր ջահել կեանքըս, ինչ ունիմ տարէք...

—Ճանաչո՞ւմ ես ինձ, ես քո Հռիփսիմէի սիրեկանն եմ, դու որ ուզեցար նրան ինձանից խլել, պէտք է մեռնիս, ասաց Սարգիսը և սուրը ճօճեց Գուրգէնի վրայ, բայց նա ուշացնում էր. մի տեսակ մտատանջութիւն տանջում էր նրան, նա դեռ մարդ չէր սպանել, թէև կողոպտելը նրա փեշակն էր:

— Խնայի՛ր...

Սուրը պլպլաց լուսնի թոյլ լոյսի տակ և խանջալը մխուեց նրա սրտի մէջ... արիւնը դուրս բղխեց նրա վէրքից և ամեն շարժողութիւն դադարեց...

Շփոթուած մի փոքր կանգ առաւ մարդասպանը իւր զոհի դիակի առաջ և ապա արիւնոտ սուրը շրջելով կանանչների մէջ և ձին հեծնելով արագութեամբ հեռացաւ մթութեան մէջ...

V

Անցնում են օրեր...

Հռիփսիմէն սպասում է, բայց իւր նշանածը չկայ: Անքուն գիշերները մաշում են նրան և նա լուռ արտասուելով սպասում է ծէգը բացուելուն: Բայց արշալոյսն էլ է բացվում, օրն էլ է մթնում ու կրկին գիշեր գալիս: Քունը մօտ չէ գալիս նրա թաց աչքերին, կարօտով նա ա՛խ է քաշում և անկողնում շուռ ու մուռ գալիս: Ո՞ւր է նրա սրտի սիրելին, իւր թանկագին նշանածը, սիրուն Գուրգէնը:

—Աղջիկս, ինչո՞ւ ես անհանգիստ, նկատում է Հռիփսիմէի մայրը:

—Ա՜խ, մայրիկ, սիրտս այրվում է... ա՛խ, այս ինչ կրակ է, մայրիկ, այս ինչ ցաւ է, որ ինձ տանջում է:

—Մի՛ դարդ անի, Հռիփսիմէ ջան, շուտով Գուրգէնը կըգայ, շուտով հարսանիք կ՚անենք, ամենքն էլ այդպէս են եղել, երբ նշանած են եղել, այրուել ու խորովել են իրանց նշանածի համար, ասում էր մայրը և աղջկան սիրտ տալիս, որ մի-քանի օր էլ համբերէ, բայց ինքն էլ անհանգիստ էր Գուրգէնի ուշանալու պատճառով:

—Բայց չէ՞ որ նա երեք օր ժամանակ տուեց, իսկ այժմ մի շաբաթ անցաւ, ո՞ւր է նա, ի՞նչ պատահեց նրա հետ, ողջ առողջ հասա՞ւ արդեօք իւր տեղը, թէ՞ մի քամբաղդութիւն պատահեց. ա՛խ, ոչինչ լուր չկայ, անյայտութիւնն աւելի տանջում է ինձ:

—Վաղն էլ սպասիր, աղջիկս, վաղը կամ ինքը կ՚երևայ և կամ լուր կըգայ:

Այդ վաղն էլ եկաւ, բայց Գուրգէնի փոխարէն հասաւ նրա մահուան բօթը...

Բ. Այվազեանց.

առաջարկութիւնը Թէպէտև համամիտ է կառավարութեան հիմնական մտքին, բայց պատերական պահանջները չէ գոհացնում: «Ինչ վերաբերում է ծախքը ծածկելու միջոցներին, աւելացրեց կանցլերը, այդ դէպքում կառավարութիւնը կ'ընդունէ պարլամենտից այդ մասին և ուրիշ առաջարկութիւններ»:

ԼՕՆԴՕՆ.—Մարքիզ Սալիզբիւրին ծանր տեսակի ինֆլուէնցիայով հիւանդ պառկած է անկողնում: Գլադըստընը հիւանդութիւնից լաւանալով, մարդ ուղարկեց Սալիզբիւրիի մօտ՝ նրա առողջութեան մասին տեղեկանալու համար:

ԿԱԼԿԱԹԱ. Աղուանստանի դեսպան Պէշինի բերած նամակներն էմիրի կողմից բարեկամական խօսքերով են կազմուած: Էմիրը համաձայն է բանակցելու Հնդկաստանի և Աղուանստանի միջև եղած խնդիրների մասին կուռումի անցքի վերաբերութեամբ, իսկ մինչ այդ աւղանական նահանգապետ Խոստային հրաման է տուած հրաժարուել յարձակողական գործողութիւններից: Սահմանների վերաբերեալ ընդհանուր խնդիրների մասին էմիրը ոչինչ չէ հաղորդում, որ արդի դրութիւնը փոխելու ընդունակ լինէր: Կաբուլ առանձին պատգամաւորութիւն ուղարկելու առաջարկութիւնը նա ոչ մերժում է և ոչ ընդունում: Ցամենայն դէպս շոգերի պատճառով առաջիկայ ամսին պատգամաւորութիւն ուղարկելուց պէտք է հրաժարուել:

ԶԱՆԱԶԱՆ

Մի լօնդօնցի առաջարկում է Անգլիայի մայրաքաղաքի գլխաւոր փողոցներն ամբողջապէս ծածկել ապակեայ տանիքով: Այդ շինութեան ծախքը պէտք է վճարեն բնակիչները, որոնք կը շահուին նորանից, որ ստիպուած չեն լինիլ շուտ-շուտ ներկել իրանց տները: Այդ տանիքը շինելուց յետոյ Լօնդօնի օդն աւելի չոր ու տանելի կը լինի, և թէ մէկը վնաս պիտի կրէ դորանից, այդ անշուշտ միայն դերձակները, գլխարկ կարողներն ու կօշկակարերը կը լինին:

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի:

Դ. Գ. ՌՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. Ներքին, երեխայոց և կանանց ց.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11¼—12½ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.

Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12¼—1 ժ. մանկաբարձական և կանանց ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. Ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՒԼԻՆԵԱՆ—5-6 ժ. երեխայոց և ներքին ց.

Ի. Վ. ՉԷՊՈՒՐԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., Քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի:

Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (և մորթու) և վիրաբուժութեան:

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7¼ ժ. ականջի, կոկորդի, քթի և նեարդային ց. (ելեքտրաբուժութիւն և մարզումն):

Վճար—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաքու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր., և հասնում է Բաքու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բաքուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում. Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում. Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Երկաթուղու փոստային-մարդատար Վլադիկավկազից դուրս է գալիս դէպի Ռոստով առաւօտեան 10 ժ. և 30 ր.:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջև:

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը, (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանաւու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Չորեքշաբթի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Սևաստապօլի վրայով:

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին Նովօրօսիյսկի Կերչի վրայով:

Բաթում է հասնում.

Երկուշաբթի օրերը երեկոյեան, շրջանաւու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Երեքշաբթի օրերը առաւօտեան, ուղիղ ընթացքով Սևաստապօլի վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրօսիյսկի և Կերչի վրայով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
«ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»
ԳԻՐՔ Ա.—Բ.
ՆԻՒԹԵՐ 1780-1834 Թ: ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Յովհաննէս Ը. Կարբեցի կաթողիկոսի լուսանկար պատկերով:

Աշխ. Գիւտ քահ. Աղանեանց

Արժանացած Սահակ-Մեսրոպեան Մրցանակին:

ԳԻՆՆ Է 2 Ռ.

Ճանապարհի ծախքը 30 կոպեկ:
Դիմել աշխատասիրողին կամ կենտրոնական գրավաճառանոց:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ՔԱՄԱԼԵԱՆՑԻ Ս.
„ԾՈՎԻՆԱՐ“
ԳԻՆՆ Է 20 Կ.

Դիմել Թիֆլիզ, Յովհ. Մարտիրոսեանցի տպարան. — Въ типографію И. Мартиросіанца, Орб. ул. № 1 и 2.

Թիֆլիզի քաղաքացի ՅՈՎԱԿԻՄ Այվազեան, ԿԷԿԷԼ Զարգարեան և որդիք գոցա ԴԱՒԻԹ, ԲԱԳՐԱՏ և ԲԱՐՍԵՂ Այվազեանցները ցաւօք սրտի յայտնելով՝ առաջիններն որդու և միւսների եղբօր՝

ԱՐՇԱԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԱՅՎԱԶԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ծանր հիւանդութիւնից յետոյ, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել, կիւրակէ, մարտի 7-ին, առաւօտեան 10 ժամին, յուղարկաւորութեան իր բնակարանից, որ գտնվում է Պերվայեա Գօնչարնայեա փողոցում, 8-րդ քաղաքամասում, № 44, տուն Թամթոսովի, դէպի Զուղուրէթի Սուրբ Աստուածածին եկեղեցին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ՍՏԱՑՈՒԵՑԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ

	Ռ.	Կ.
Աղանեանց Գիւտ քահ.՝ Դիւան հայոց պատմութեան 1780—1834. Յովհաննէս Ը. կաթողիկոսի լուսանկար պատկերով գինն է . . . . (ճան. ծախ. 30 կ.)	2	»
— (Թարգմ.) Երրորդ ոսկի, առակ Լակիտէի. երկրորդ տպագր. գ. . . . . (ճան. ծախ. 10 կ.)	»	10
Թումանեանց Մեսրոպ՝ Եղերերգութիւն յօրհաս Թանկայ Թաղիադեանց գ. . . . . (ճան. ծախ. 20 կ.)	»	40
Քամալեանց Ս.՝ Հէքեաթներ գ. . . . . (ճան. ծախ. 20 կ.)	»	30
— Ծովինար. Հէքեաթ. երկրորդ տպ. գ. . . . . (ճան. ծախ. 15 կ.)	»	20
Ֆէլդմանօղլու՝ Անդրոնիկ Կոմնէն. պատմ. վէպ. Թարգմ. Կ. Մարտիրոսեան. գ. . . . . (ճան. ծախ. 25 կ.)	»	50
Տէր-Զաքարեան Ա.՝ Կաշկանդուած սէր. գ. . . . . . . (ճան. ծախ. 10 կ.)	»	10
Աստուածատուր-Փափազեան՝ Գաղափարական օրիորդ մ. ա. գ. . . . (ճան. ծախ. 10 կ.)	»	10

Վերադիր վճարով ստանալ ցանկացողները պէտք է մի երրորդ մասը կանխիկ ուղարկեն:

(33) (5—1)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ստացուել են և վաճառվում են հետևեալ նոր գրքերը.

Զուդերման, Պատիւ, կոմեդիա 4 գործ. գ. 60 կ., ճան. ծ. 15 կ.:

Զաքարեանց Ալ., Շիրվանի կոյսը, գ. 5 կ., ճան. ծ. 10 կ.:

Տ. Եղիշէ-Լէֆէր, Մրցումն համարակութեան հետ, գ. 40 կ., ճան. ծ. 15 կ.:

Տէր-Զաքարեանց Ա., Կաշկանդուած սէր, գ. 10 կ., ճան. ծ. 10 կ.:

Պռօշեանց Պ., Սկիզբն երկանց, գ. 1 ռ. 20 կ., ճան. ծ. 40 կ.:

Նոյն տեղը վաճառվում է և պ. Պռօշեանցի «Սօս և Վարդիթեր» վէպը, գ. 1 ռ. 50 կ., ճան. ծ. 40 կ.:

(30) (5—3)

Սեպտեմբերի 1-ից Երևանեան հրապարակի վրայ, քաղաքային տանը, գեղավաճառանոցին կից
ԲԱՑՈՒԱԾ Է
ԳԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆԵԱԿԱՆ
ՆԻՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Մ. Ի. ԱԴ ՄՈՒՐՕՎԻ

(78) (100—45)

Parfumerie Ganterie
MODES
H. BERLEMONT
COIFFEUR
de S. A. I. le Grand Duc
MICHEL NICOLAÉVITCH

Bonneterie pour hommes. Chapeaux pour dames. Fleurs, plumes. Maroquinerie, ciseaux rasoirs. Cravates, mouchoirs. Brosserie. Parfumerie française et anglaise des premières maisons.

Salon de coiffures pour dames.

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ամենայն ճշտութեամբ:

Берлемонъ, Дворцовая улица.

(91) (100—57)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են հետևեալ
ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.

Գեղամեանց Սամուէլ. Փրդուսի՝ Ռոստամ և Սոհրաբ ամբողջ վէպ և համառօտներ Շահ-Նամայից. Գինն է . . . . 60 կ
ճան. ծախքը 20 կ.

Կոստանեան. Թովմաս Մեծոփեցու յիշատակարանը. . . . . . 25 կ.
ճան. ծախքը 15 կ.

(15) (5—5)
կ.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿ.
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն Լօնդօնի ու Բաթումի միջև և փոխադարձօրէն:

Երկուշաբթի 8/20 մարտի, դուրս կը գնայ Բաթումից Գլադիանա—*Gladiana* նաւը, նաւապետ LAMANON (Լամանօն) դէպի Կ. Պօլիս, Մարսէյլ, Հավր, Լօնդօն, մտնելով նաև միջանկեալ նաւահանգիստներ:

Ագէնտները՝ Բաթումում Պէտրյէր, Թիֆլիզում [illegible] և Բաքւում [illegible]:

(32) (2—2)
ու. և կ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ

ԶԱՐԴԵՐ ՏՕՆԱԾԱՌԻ ՀԱՄԱՐ

Ստացուած են մեծ քանակութեամբ ամեն տեսակ շքեղ կարտօնաժներ և զարդեր տօնածառի համար. նոյնպէս վառուող թելեր, մագնի, պարաֆինի մոմեր, զանազան մոմակալներ, գոյնզգոյն լապտերներ:

ՍԵՆԵԿԻ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՖԵՅԵՐՎԵՐԿ ԵՒ ԲԵՆԳԱԼԵԱՆ ԿՐԱԿ

Օդըկօլօն, օծանելիք (պօմադա), անուշահոտ ջրեր (դուխի) կշռով և սրուակներով և առհասարակ կօսմեթիքական և անուշահոտութեանց այլ և այլ ապրանքներ արտասահմանի և ռուս գործարանների, ամենամեծ քանակութեամբ:

(118) (50—29)

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
ԵՂԲ. ՊԱՍԽԱԼԻԴԻ
ԲՐՈՒՍԱՅՈՒՄ (Տաճկաստան)
ԲՋՋԱՒՈՐ ՀԱՏԻԿՆԵՐ
(ЦЕЛЛЮЛЯРНАЯ ГРЕНА)
ԵՂԲ. ՊԱՍԽԱԼԻԴԻԻ

Ինչպէս արդէն յայտնի է կովկասի շատ շերամարուծներին, տալիս է ամենաառողջ որդ, իւրաքանչիւր մսխալը մօտ 35 ֆունտ Թաց սպիտակ բոժոժ: Ծախվում է քառակուսի արկղիկներով, որոնցից իւրաքանչիւրի մէջ 7½ մսխալ, Կայսերական Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան բնակարանում. մսխալն արժէ 75 կ.: Մեծ քանակութեամբ գնել ցանկացողները կարող են դիմել Տփխիս՝ Դվօրցովոյ փողոց Աղնուականաց հողային բանկի քարվանսարայում № 128., Զաքաթալա՝ Եղբ. Պասխալիդիի գրասենեակում:

(9) (12—8)

ՁԷԹԻ ԵՒ ՍԱՊՈՆԻ
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ
Յ. ԹԱՅԻՐԵԱՆԻ եւ Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆԻ
ԹԻՖԼԻԶՈՒՄ

Ծախու են հանվում ձէթ սեղանատան համար՝ [illegible], [illegible] և [illegible], [illegible], [illegible] ձէթ ներկի համար և ՍԱՊՈՆ բարձր տեսակի՝ կլոր, մարմարէ և խզալի:

ՇՇԵՐՈՎ ՎԱՃԱՌՈՒՄՆ: Կովկասեան Ընկերութեան դեղատան վերաբերեալ ապրանքների խանութում, Զօվանիի մօտ, Գօլովինսկի պրօսպ. տ. Փօրրժանսկու և Վօրօնցովի արձանի մօտ Վարվարովի մօտ, Գօլովինսկի պրօսպ. տ. Օրբելեանի՝ Սարաջևի մօտ, Գօլովինսկի պրօսպ. տ. Բաբանասովի՝ Բակօրովի մօտ, Նիկօլայեվսկի փողոց սեպհական տուն՝ Խուդադովի մօտ, Նիկօլայեվսկի փողոց Ալէքսանդրեան եկեղեցու դէմ Սադաղովի մօտ, Պուշկինսկայա փողոց, տուն Սունդուկեանցի՝ Գալմալեանցի մօտ, Պանասովիչի փողոց տ. № 1, Տերեթելու մօտ, Վելիամինովսկի փողոց տ. Խօսրօեվի:

ՉԱՓՈՎ ՎԱՃԱՌՈՒՄՆ: Սեպհական վաճառանոցներում. Թուրքաց մէյդանի վրայ՝ քաղաքային բուդկում, Սօլդատսկի Բազարում Բուդդանովի տանը, Հավլաբարի հրապարակում՝ քաղաքային բուդկում և Օլգինսկի փողոցում Մերուբնութովի տանը:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՎԱՃԱՌՈՒՄՆ գործարաններում. Երևանեան ճանապարհի վրայ սեպհական տներում: Սեպհական վաճառատներում և գործարանում գտնվում է [illegible] անասուններին կերակրելու համար:

(16) (8—6)

ԳՕՆՆԷՐ եւ ԼԱՅՑ

ԺԻՐԱՐԴՈՎՍԿՈՒ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԽԱՆՈՒԹ

Դվօրցովի փողոց, կալուածական բանկի քարավանսարայ

ՍՏԱՑՈՒԱԾ Է

ՔԱԹԱՆ ՍԵՂԱՆԻ ԺԵՐՄԱԿԵՂԷՆ

կանանց և տղամարդկանց համար ճերմակեղէն: Բրդեայ և մետաքսեայ վերմակներ:

ՕԺԻՏ

(124) (20—19)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՆԴՐՈՆԻԿ ԿՈՄՆԷՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ
ԹԱՐԳՄ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Վաճառվում է Թարգմանչի մօտ, Յ. Մարտիրոսեանցի տպարանում: Օտարաքաղաքացիք դիմելու են հետևեալ հասցէով. Тифлисъ, Типографія И. Мартиросіанца.

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Марта 1893 года.

Տպարան Յ. Մարտիրոսեանցի:

Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул. д. № 1—2.